

Հաստատված է  
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի  
խորհրդի 27.04.22թ. որոշմամբ  
Թիվ 136 արձանագրություն

Ներքին աուդիտի եզրակացությունը  
բանկի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին  
համապատասխանության վերաբերյալ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետև՝ Բանկ) ներքին աուդիտի բաժինը Բանկի խորհրդի կողմից հաստատված 2021թ. տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն իրականացրել է տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև Բանկում իրականացվող գործընթացների վերստուգումներ: Իրականացվել է նաև հետստուգումային հսկողություն Բանկի ստորաբաժանումների կողմից այն միջոցառումների իրականացման նկատմամբ, որոնք առաջարկվել են արտաքին աուդիտի ստուգման արդյունքում: Այդ աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել է նաև Բանկում ներքին հսկողության համակարգի համապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պայմաններին: Վերստուգումները և դրանց շրջանակներում ընդգրկվող թեմաների ընտրանքը կատարվել է այնպես, որպեսզի բավարար հիմքեր ձևավորվեն արժանահավատ եզրակացության համար: Հաշվի առնելով կորոնավիրուսային համաճարակի պայմաններում առողջապահական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը և գործող սահմանափակումները, որոշ վերստուգումներ իրականացվել են մասնակի հեռավար եղանակով՝ այցելություններ իրականացվել են վերստուգումների ոչ ամբողջ ժամանակահատվածում, և որոշ ոլորտներ վերստուգվել են, հիմք ընդունելով փաստաթղթերի լուսապատճենները:

Կատարված վերստուգումների ընթացքում ուսումնասիրվել են Բանկի ներքին իրավական ակտերը, դրանց համապատասխանությունը գործող պահանջներին, ինչպես նաև իրականացվող գործառնությունների համապատասխանությունը այդ ակտերի դրույթներին: Նշված գործընթացի արդյունքում արձանագրվել են նաև որոշակի դիսկեր, խնդիրներ և թերություններ, որոնց լուծումներ տալու և/կամ նվազեցնելու նպատակով դրանք քննարկվել են Բանկի շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների հետ, ապա ներկայացվել են Բանկում գործող հանձնաժողովների և բանկի խորհրդի նիստերի ընթացքում, որի արդյունքում տրվել են համապատասխան հանձնարարականներ: Հանձնարարականների կատարման ընթացքը ևս մշտապես գտնվել է Ներքին աուդիտի ուշադրության կենտրոնում:

Հիմք ընդունելով կատարված վերստուգումների և հետստուգումների արդյունքները՝ մեր կարծիքով Բանկի ներքին հսկողության համակարգը 2021թ. ընթացքում ընդհանուր առմամբ բավարարել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ»-ի պահանջներին:

Ներքին աուդիտի բաժնի պետ



Ա. Վարժապետյան  
27.04.2022թ.